ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2413-Ա « 28 » հունիսի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի Հ. 1503-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշման հավելվածի 6-րդ և 10-րդ կետերը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը.

1. Հաստատել Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական պաշտպանության խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ Երևանի քաղաքապետին կից սոցիալական պաշտպանության խորհրդի անդամները նշանակվում են երկու տարի ժամկետով:
3. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2022 թվականի ապրիլի 21-ի «Երևանի քաղաքապետին կից, սոցիալական պաշտպանության խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» հ. 1503-Ա որոշումը:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
28.06.2024թ.
հ. 2413-Ա որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՈՐԾՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Տիգրան Ավինյան	Խորհրդի նախագահ Երևանի քաղաքապետ
Սարգիս Մադաթյան	Խորհրդի նախագահի տեղակալ Երևանի քաղաքապետի տեղակալ
Լուսինե Հովհաննիսյան	Խորհրդի քարտուղար Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետ
Խորհրդի անդամներ	
Մարինա Պարազյան	«ՍՈՐՍ» հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների աջակցության հիմնադրամի ՀՄԴ տնօրեն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ փոխնախագահ
Արմեն Սողոյան	Հայկական հոգեբուժական ասոցիացիայի նախագահ
Դավիթ Թումասյան	Անհատ փորձագետ
Վանանդ Կարապետյան	ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Աիդա Մուրադյան	Անհատ փորձագետ
Միրա Անտոնյան	«Երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի ՀՄԴ տնօրեն, «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ նախագահ

Աննա Սաղաթելյան	Սոցիալական աշխատող
Արփինե Աշոտյան	«Քայլ առաջ» սոցիալական հասարակական կազմակերպության տնօրեն
Արմինե Սահակյան	«Մենք կարող ենք» մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների, երեխաների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանության ՀԿ նախագահ
Արմենուհի Հովակիմյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի սոցիալական քաղաքականության բաժնի ղեկավար
Արփենիկ Աբրահամյան	«Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն բարեգործական ՀԿ նախագահ
Լիլիթ Բաղդասարյան	«Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն ՀԿ նախագահ
Լուսինե Սիմոնյան	Մանկական զարգացման հիմնադրամ ՀՄԴ տնօրեն
Նաիրա Սարգսյան	«Կողք կողքի» ներառական կրթամշակութային ՀԿ նախագահ
Անահիտ Սահակյան	ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, Հ.Գ.Թ., Դոցենտ
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**